ՏԵՂԵԿԱՆՔ

(«Նոտարիատի մասին» օրենքում հոդվածներում առաջարկվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 36. Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունները

1. Նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները.

1) վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն).

2) միջոցներ է ձեռք առնում ժառանգական գույքի պահպանության համար.

3) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր.

4) տալիս է ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրեր.

5) վավերացնում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը.

6) վավերացնում է փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը.

7) վավերացնում է փաստաթղթերի թարգմանության իսկությունը.

8) հաստատում է քաղաքացու ողջ լինելու փաստը.

9) հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը.

10) հաստատում է լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնությունը.

11) հաստատում է փաստաթղթեր ներկայացնելու ժամանակը.

12) ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթերը փոխանցում է այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններ.

13) դեպոզիտ է ընդունում, պահպանում, հանձնում կամ վերադարձնում դրամական գումար կամ արժեթղթեր, թանկարժեք մետաղներ, քարեր և տալիս է վկայագիր.

14) ի պահ է ընդունում փաստաթղթեր.

15) ապահովում է ապացույցներ.

16) վավերացնում է կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրությունը.

17) հավատարմագրային կառավարման է հանձնում ժառանգական գույքը.

18) տալիս է կտակակատարի լիազորությունների հավաստման վկայագրեր.

19) բոլոր ժառանգների համաձայնությամբ չեղյալ է համարում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագրերը.

20) վավերացնում է իր վստահած թարգմանչի ստորագրության իսկությունը.

21) տալիս է կատարողական մակագրության թերթ.

21.1) արձակում է վճարման կարգադրություն.

22) տալիս է նոտարական ակտերի կրկնօրինակներ.

22.1) ներկայացնում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմին.

23) իրականացնում է օրենքով նախատեսված նոտարական այլ գործողություններ:

2. Սույն հոդվածով նախատեսված նոտարական առանձին գործողություններ կարող են իրականացնել Քաղաքացիական օրենսգրքով ուղղակի նախատեսված պաշտոնատար անձինք:

3. Ժառանգներին և հնարավոր պարտատերերին հայտնաբերելու նպատակով նոտարը համացանցում այդ նպատակի համար նախատեսված տիրույթում հրապարակում է հաղորդագրություն ժառանգության բացման վերաբերյալ:

4. Նոտարը, նոտարական գործողություններ կատարող այլ անձինք նոտարական գործողություններ իրականացնելիս կարող են օգտվել պետական մարմինների կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններից, իր լիազորություններն իրականացնելու նպատակով ստանալ անձնական տվյալներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

5. Նոտարը, սույն հոդվածով նախատեսված նոտարական ծառայություններից բացի, տրամադրում է հետևյալ ծառայությունները.

1) իրականացնում է գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, դադարմանը և փոխանցմանն ուղղված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման սպասարկմանն ուղղված գործառույթներ.

2) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում իրականացնում է պետական մարմինների սպասարկման գրասենյակի գործառույթներ.

3) գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պահանջը ապահովելու նպատակով ծանուցում է գույքի նկատմամբ իրավունքների գրանցում իրականացնող մարմիններին գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ նախնական նշում կատարելու մասին.

4) հաստատում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր:

(36-րդ հոդվածը լրաց. 19.10.16 ՀՕ-180-Ն, 16.07.20 ՀՕ-388-Ն)

Հոդված 36.1. Նոտարական ակտը

~~1. Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունների արդյունքում կայացվող որոշումը, գործարքի կամ այլ փաստաթղթի հաստատումը կամ վավերացումը, կատարողական մակագրության թերթը հանդիսանում են նոտարական ակտ:~~

1.Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունների արդյունքում կայացվող որոշումը, գործարքը, արձակած վճարման կարգադրությունը կամ այլ փաստաթղթի հաստատումը կամ վավերացումը, կատարողական մակագրության թերթը հանդիսանում են նոտարական ակտ:

2. Նոտարական ակտը պետք է բովանդակի՝

1) նոտարական ակտի համարը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը.

2) նոտարական տարածքը, նոտարի անունը, ազգանունը.

3) փաստաթղթի նույնականացումը հաստատող գաղտնագիրը.

4) նոտարի ստորագրությունը և կնիքը, ճզմիչ կնիքը, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի վավերացման դեպքում՝ էլեկտրոնային թվային ստորագրությունը և էլեկտրոնային կնիքը.

5) առկայության դեպքում՝ պետական տուրքի և նոտարի մատուցած ծառայությունների վճարի չափը.

6) օրենքով սահմանված այլ պարտադիր պայմաններ:

(36.1-ին հոդվածը լրաց. 19.10.16 ՀՕ-180-Ն, 13.12.17 ՀՕ-316-Ն)

«Գ Լ ՈՒ Խ 18.2

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼԸ

Հոդված 82.4. Ընդհանուր դրույթներ վճարման կարգադրություն

արձակելու վերաբերյալ

1. Վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացվում է նոտարին այն դեպքերում, երբ կողմերը իրենց միջև կնքված պայմանագրով համաձայնել են պայմանագրից բխող որոշակի դրամական պարտավորությունը չկատարելու դեպքում վճարման կարգադրություն արձակելու դիմումը ներկայացնել նոտարին:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ գլխով նախատեսված կանոնները տարածվում են սույն գլխի նկատմամբ այնքանով, որքանով դրանք կիրառելի են նոտարի կողմից վճարման կարգադրություն արձակելու նկատմամբ՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

Հոդված 82.5. Վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ձևը և բովանդակությունը

1. Վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը նոտարին ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, որում պետք է նշվեն՝

1) նոտարի անունը, ազգանունը,

2) դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման (բնակության) վայրի հասցեն, անձնագրային տվյալները, իսկ իրավաբանական անձ դիմողի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, ինչպես նաև դիմողի ֆաքսի, հեռախոսի համարը կամ էլեկտրոնային հասցեն,

3) պարտապանի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը) և հաշվառման (բնակության) կամ գտնվելու վայրի հասցեն,

4) բռնագանձման ենթակա գումարի հիմքն ու չափը,

5) պահանջը հաստատող ապացույցները,

6) պահանջ՝ վճարման կարգադրություն արձակելու մասին,

7) հայտարարություն առ այն, որ պահանջը կապված չէ դեռևս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, կամ հանդիպակաց պարտավորություններն արդեն կատարված են,

8) կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

2. Դիմումին կցվում են պահանջը հաստատող ապացույցները, ինչպես նաև նոտարական գործողության վճարի և օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից:

3. Դիմումը ստորագրում է դիմողը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած դիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

4. Դիմումը ստորագրվում է էլեկտրոնային եղանակով, իսկ նման հնարավորություն չունենալու դեպքում դիմումի ստորագրված օրինակը ուղարկվում է սկանավորված տարբերակով:

5. Վճարման կարգադրություն արձակելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով, ինչպես նաև նոտարական գործողության վճար՝ Կառավարության որոշմամբ սահմանված չափով:

Հոդված 82.6. Վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի քննության ժամկետը և կարգը

1. Նոտարը՝ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում՝ ծանուցում է պարտապանին ստացված վճարման կարգադրության մասին՝ առաջարկելով ծանուցումը ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում կատարել պարտավորությունը կամ ներկայացնել իր առարկությունները վճարման կարգադրություն արձակելու դիմումի վերաբերյալ:

2. Պարտապանի ծանուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, եթե ծանուցման այլ կարգ սահմանված չէ կողմերի միջև կնքված պայմանագրով:

3. Պարտապանին տրամադրված 30-օրյա ժամկետի ավարտմանը հաջորդող երկշաբաթյա ժամկետում՝ նոտարը՝

1) արձակում է վճարման կարգադրություն.

2) ամբողջովին մերժում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը:

Հոդված 82.7 Վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի մերժումը

1. Նոտարը՝ պարտապանին առարկություն ներկայացնելու համար տրամադրված 30-օրյա ժամկետի ավարտմանը հաջորդող երկշաբաթյա ժամկետում մերժում է վճարման կարգադրություն արձակելը, եթե՝

1) այն ներկայացվել է սույն օրենքի 82.4-րդ և 82.5-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմամբ,

2) առկա է նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելը մերժելու մասին նոտարի որոշում,

3) նոտարի կողմից սույն օրենքի 82.6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում պարտապանը նոտարին ներկայացրել է գրավոր առարկություն կամ կատարել է վճարման պահանջը.

4) պահանջի հիմքում ընկած գործարքն առերևույթ հակասում է օրենքին.

5) դիմումը ստանալուց հետո պարզվում է, որ կողմերի միջև կնքված պայմանագրում համաձայնություն ձեռք չի բերվել գումարի բռնագանձման պահանջը նոտարին ներկայացնելու մասին:

2. Վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու մասին նոտարի որոշումը չի զրկում դիմողին հետագայում նույն պահանջը դատարան ներկայացնելու իրավունքից:

Հոդված 82.8 Վճարման կարգադրության բովանդակությունը և այն պարտապանին ուղարկելը և կողմերի համար պարտադիր դառնալը

1. Նոտարը վճարման կարգադրություն արձակելու դիմումը բավարարելու դեպքում արձակում է վճարման կարգադրություն, որը կողմերի համար դառնում է պարտադիր՝ այն կայացնելուց հետո 15-օրյա ժամկետում:

2. Նոտարի արձակած վճարման կարգադրությունը պետք է պարունակի՝

1) նշում առ այն, որ նոտարն ըստ էության չի ստուգել պահանջի հիմնավորվածությունը.

2) կարգադրություն՝ երկու շաբաթվա ընթացքում վճարման պահանջը կատարելու մասին.

3) եզրահանգումներ պետական տուրքի վճարման կամ դիմողի վճարած պետական տուրքի կամ նոտարական գործողության վճարի հատուցման վերաբերյալ:

3. Վճարման կարգադրությունը ոչ ուշ, քան արձակվելու հաջորդ օրն ուղարկվում է պարտապանին:

4. Կողմերի համար պարտադիր դարձած վճարման կարգադրությունը կամովին չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 82.9 Վճարման կարգադրությունը վիճարկելը

1. Վճարման կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված

կարգով՝ վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Հոդված 82.10 Վճարման կարգադրությունը չեղյալ ճանաչելու հիմքերը

1. Առաջին ատյանի դատարանը չեղյալ է ճանաչում նոտարի արձակած վճարման կարգադրությունը, եթե

1) պահանջը ենթակա չէր բննության նոտարի կողմից.

2) նոտարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների էական խախտմամբ:»: